



Social Security

*Benefits America!*

# Ինչպես Վարկեր Եք Վաստակում

2010թ.

[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)

# Ինչպես Վարկեր Եք Վաստակում

**Դուք Սոցիալական Ապահովության  
նպաստներ ստանալու իրավասու  
կլիներք վաստակելով Սոցիալական  
Ապահովության վարկեր երբ  
աշխատեք ու վճարեք Սոցիալական  
Ապահովության հարկեր:**

**Չ**եր վարկերի քանակը կախյալ է ձեր հասույթից: Մենք օգտագործում ենք ձեր աշխատանքային պատմությունը եւ որոշում ենք ձեր ծերության, հաշմանդամության եւ մահվան դեպքում ձեր ընտանիքի վերապրող անդամներու նպաստներ ստանալու իրավասությունն ու գումարը:

2010 թվականին դուք ստանում եք մեկ վարկ յուրաքանչյուր 1,120 դոլար հասույթի համար: Յուրաքանչյուր տարի անձ մը կարող է ստանալ առաելագոյնը չորս վարկեր:

Ամեն տարի վարկերի համար պահանջվող հասույթի գումարը բարձրանում է: Չեր աշխատանքային պատմությունն ու վարկերը մնում են սահմանազերծօրէն ձեր Սոցիալական Ապահովության հաշվառման մէջ, նույնիսկ եթե դուք փոփոխում եք ձեր աշխատանքի վայրը կամ ժամանակավորապես հասույթ չեք ունենում:

## **Հատուկ կանոններ աշխատանքի որոշ տեսակների համար**

Սոցիալական Ապահովությունը ունի հատուկ կանոններ որոշ աշխատանքների համար:

Ինքնաշխատ անձ մը ստանում է Սոցիալական Ապահովության վարկեր նույն կերպ ինչպես վարձով աշխատողը (մեկ վարկ յուրաքանչյուր 1,120 դոլար գուտ եկամուտի համար եւ տարեկան առաելագոյնը չորս

վարկեր): Եթե ձեր տարեկան զուտ հասույթը 400 դոլարից պակաս է, հատուկ կանոններ կան ձեզ համար: Մանրամասն տեղեկության համար կարդացե՛ք՝ *Եթե Դուք Ինքնաշխատ Եք* հրատարակությունը (հրատարակության համար 05-10022-AM):

Եթե դուք զինվոր եք, դուք ստանում եք Սոցիալական Ապահովության վարկեր ինչպես քաղաքացիական ծառայողները: Որոշակի պայմաններում դուք նաև կարող եք ստանալ հասույթի լրացուցիչ վարկեր: Մանրամասն տեղեկության համար կարդացե՛ք *Military Service and Social Security (Զինվորական Ծառայություն և Սոցիալական Ապահովություն*, հրատարակության համար 05-10017).

Մենք ունենք վարկեր ստանալու հատուկ կանոններ հետևյալ աշխատանքների համար՝

- Տնային աշխատանք.
- Ազարակային աշխատանք.
- Եկեղեցական աշխատանք կամ եկեղեցու կողմից ղեկավարված աշխատանք (երբ անոնք Սոցիալական Ապահովության հարկեր չեն վճարում):

Չանգահարե՛ք մեզ եթե հարցեր ունեք ձեր աշխատանքային վարկերու մասին:

**Ո՞րքան պետք է աշխատեք  
Սոցիալական Ապահովության  
պահանջները բավարարելու համար**

Նպաստներ ստանալու իրավասու լինելու համար վարկերի քանակը կախյալ է ձեր տարիքից և նպաստների տեսակից:

## Ծերության նպաստներ

1929 թվականին եւ ավելի ուշ ծնված մի անձ պետք է ունենա 10 տարվա աշխատանք (40 վարկեր), որպեսզի իրավասու լինի ծերության նպաստներ ստանալու: Բայց 1929 թվականից առաջ ծնյալ անձիք ավելի քիչ տարիներու պետք ունենեն:

## Հաշմանդամության նպաստներ

Ձեր տարիքը որոշում է պետք եղած վարկերու քանակը հաշմանդամության նպաստներ ստանալու համար:

- Եթե հաշմանդամ եք դառնում մինչեւ 24 տարեկան, դուք պետք ունեք 1գ տարվա աշխատանք (վեց վարկեր) նախկան հաշմանդամ դառնալուց երեք տարվա ընթացքում:
- Եթե դուք հաշմանդամ եք դառնում 24-ից մինչեւ 30 տարիքում, անհրաժեշտ է որ ունենաք վարկեր 21 տարեկանից մինչեւ հաշմանդամ դառնալու տարիքը ընկած ժամանակամիջոցի կէսի համար:
- Եթե դուք հաշմանդամ եք դառնում 31 տարեկանում կամ ավելի ուշ, դուք պետք ունեք առնվազն 20 վարկեր, որն վաստակած եք նախկան հաշմանդամ դառնալուց 10 տարվա ընթացքում: Ստորեւի աղյուսակում տրված են օրինակներ, թե որքան վարկ դուք ունենալու եք եթե դուք հաշմանդամ դարձաք որոշ տարբեր տարիքներում: Այս աղյուսակը չընդգրկում բոլոր իրավիճակները:

Հաշմանդամ դառնալու տարիք	Պահանջվող վարկեր	Աշխատանքի տարիներ
31-ից մինչև 42	20	5
44	22	5 1/2
46	24	6
48	26	6 1/2
50	28	7
52	30	7 1/2
54	32	8
56	34	8 1/2
58	36	9
60	38	9 1/2
62 կամ ավել	40	10

**Վերապրողների (survivors) նպաստներ**

Աշխատողի մահից ետք ընտանիքի որոշ անդամներ կարող են ստանալ վերապրողների նպաստներ: Մահացած անհատի տարիքից կախյալ է անհրաժեշտ եղած վարկերի քանակը իրավաւ լինելու վերապրողների նպաստների համար (մինչև 10 տարի): Խնամքի տակ գտնվող երեխաները կարող են ստանալ վերապրողների նպաստներ, եթե մահացած երիտասարդ աշխատողը ուներ 1գ տարվա աշխատանք (վեց վարկեր)՝ նախկան իր մահից երեք տարվա ընթացքում:

Հետեյալ ընտանիքի անդամները կարող են ստանալ վերապրողների նպաստներ.

- Այրի տղամարդ կամ այրի կին՝ լրիվ նպաստներ լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքում կամ կրճատված նպաստներ 60 տարեկանից ետք.

- Հաշմանդամ այրի տղամարդ կամ այրի կին 50 տարեկանից ետք.
- Որեւէ տարիքի այրի տղամարդ կամ այրի կին եթե նա խնամում է ձեր երեխային, որը 16 տարեկանից փոքր է կամ հաշմանդամ է եւ ստանում է Սոցիալական Ապահովության նպաստներ:
- Ձեր հաշմանդամ երեխաները եթե նրանք հաշմանդամ եղել են նախկան 22 տարիքը.
- Ձեր երեխաները որոնք 18-ից մինչեւ 19 տարեկան են, սակայն հաճախում են տարրական կամ միջնակարգ դպրոց: Կարք մը պարագաներում, կարող ենք վճարել ձեր խորթ եւ որդեգրված երեխաներին ինչպես նաեւ թոռնիկներին:
- Ձեր ծնողները որոնք 62 տարիքից ավել են եւ եղել են ձեր խնամքի տակ:  
Դիմեք մեզ մանրամասն տեղեկատվության համար:

## ՄԵՏԻՔԵՐ

Ձեր կողմից վաստակած Սոցիալական Ապահովության վարկերը հաշվի են առնվումերը 65 տարիքում ՄԵՏԻՔԵՐ ստանալու իրավասու լինեք: Դուք նաեւ կարող եք ստանալ ՄԵՏԻՔԵՐ եթե հաշմանդամության նպաստներ ստացել եք 24 ամիսների ընթացքում: Ձեր խնամքի տակ գտնվողները կամ ձեր ընտանիքի վերապրող անդամները նույնպես իրավասու են ՄԵՏԻՔԵՐ ստանալու (որեւէ տարիքում) եթե նրանք հաշմանդամ են: Անոնք որոնք տարապում են երիկամունքի մշտական ձախողությունից, կամ կարիք ունեն արյան մաքրումի (տայալսզ/dialysis) եւ կամ երիկամունքի փոխարինության, կարող են իրավասու լինել ՄԵՏԻՔԵՐ ստանալու որեւէ տարիքում: Լրացուցիչ տեղեկության համար կարդացեք *ՄԵՏԻՔԵՐ* հրատարակությունը (հրատարակության համար 05-10043-AM):

## Որոշ աշխատանքներ հաշվի չեն առնվում Սոցիալական Ապահովության նպաստների համար

Որոշ անձեր չեն աշխատում Սոցիալական Ապահովության ընդգրկված գործերում: Նշված աշխատողներից մի մասը հետևյալն է՝

- Դաշնակցային կառավարական պաշտօնյաններից մեծամասնությունը որոնք աշխատանքի են ընդունվել նախկան 1984 թվականը. (սակայն Հունվար 1, 1983-ից սկսյալ բոլոր կառավարական աշխատողները վճարում են Սոցիալական Ապահովության Մետիքերի հիվանդանոցի ապահովագրության հարկերը).
- Երկաթուղու աշխատողներ որոնք 10 տարուց ավելի ծառայություն ունեն.
- Պետական եւ տեղական կառավարությունների որոշ աշխատողներ, որոնք որոշած են չմասնակցիլ Սոցիալական Ապահովության նպաստների ծրագրին կամ
- 21 տարիքից նվազ երիտասարդներ, որոնք իրենց ծնողների համար կատարում են առօրյա տնային աշխատանքներ (բայց ոչ անոնք որոնք 18 տարեկան են եւ ավելի ու աշխատում են իրենց ծնողի հաստատություններում):

## Ստուգեցեք ձեր տվյալները

Յուրաքանչյուր տարի ձեր գործատերը ուղարկում է ձեր W-2 ձեւաթուղթը (*Wage and Tax Statement—Աշխատատեղի եւ Հարկերի Հաշուեցույցի*) օրինակը Սոցիալական Ապահովության: W-2-ի վրա նշված ձեր անունը եւ համարը մենք համեմատում ենք մեզ մոտ գտնվող տեղեկությունների հետ: Ետքը, W-2-ում նշված ձեր հասույթը մենք արձանագրում ենք ձեր Սոցիալական Ապահովության համարի տակ: Մենք օգտագործում ենք ձեր կյանքի ընթացքում ստացված հասույթը որոշելու ձեր ապագայում ստանալիք նպաստների գումարը:

Կարևոր է որ ձեր Սոցիալական Ապահովության քարտի վրա նշված անունն ու համարը համապատասխանի ձեր գործատիրոջ աշխատավարձի ցուցակներին եւ W-2-ին: Եթե դրանք չհամապատասխանեն, ձեր գործատերը կարող է նամակ ստանալ Սոցիալական Ապահովությունից: Այդ նամակը չի նշանակում, որ ձեր գործատերը պետք է փոփոխի ձեր աշխատանքը կամ ձեզ հեռացնի աշխատանքից: Դուք պետք է ստուգեք որ ձեր բոլոր տվյալները ճիշտ լինեն եւ ուղղեք որեւէ սխալ Սոցիալական Ապահովության մոտ: Հայտնե՛ք ձեր գործատիրոջ, եթե ձեր անունը, ազգանունը եւ Սոցիալական Ապահովության համարը գործատիրոջ հաշվառման մեջ ճիշտ չեն:

## Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, [www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov) ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խոսվերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել թարգմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:



**Social Security Administration**  
SSA Publication No. 05-10072-AM  
How You Earn Credits (Armenian)  
January 2010